

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Յունուար 2024

ՄԵՐ ԽՕՍՔԸ



Հայ ժողովուրդը ավելի քան հարիւր տարիներու ընթացքին այսպիսի տխուր մթնոլորտի մը մէջ չէր դիմաւորած նոր տարին: 2023-ի վերջին էջերուն մէջ արձանագրուեցան հայոց պատմութեան ամենացաւալի կորուստները, եւ տարին ամփոփուեցաւ կանաչապատ Արցախ աշխարհի անկումով ու 120.000 հայրենակիցներու տեղահանութեամբ: Բնական է, որ ամէն օր կ'արթնանք եւ կը թուի, թէ պայքարը ավելի ու ավելի կը դժուարանայ: Բայց ճիշդ այդ պատճառով է, որ չյուսալքուիլն ու պողպատէ կամքով զինուիրը ավելի քան երբեք անհրաժեշտ են հիմա: Մինչ մենք մեր տաքուկ տուններուն պատերէն ներս շրջապատուած ենք մեր սիրելիներով, արցախցի մեր քոյրերն ու եղբայրները կը սգան իրենց պապենական տան ու սիրելիներու կորուստը: Հետեւաբար մեզմէ իւրաքանչիւրը պէտք է քաջ գիտակցի, որ մենք յանձնուելու իրաւունք չունինք: Այսօր մեր ժողովուրդին պէտք է սերունդ, որ պատրաստ է լսել ազգային պարտքի կանչը եւ փութալ իր հայրենիքին ու ժողովուրդին օգնութեան ու ծառայութեան: Մեր ժողովուրդին պէտք է սերունդ, որ ներքուստ Արցախին ամուր կառչած՝ պատրաստ է անդադար գործել, որպէսզի դարձեալ վերատիրանայ այդ սուրբ հողին վրայ արժանապատուօրէն կանգնելու իրաւունքին: Եկէք դառնանք մէկ սիրտ եւ մէկ բազուկ: Եկէք յիշենք, որ դատ ունեցող ազգ ենք եւ ժամանակ չունինք դադար առնելու: Եկէք այս յանձնառութեամբ բանանք Նոր Տարուան դուռը:



ԲԱՆԱԿԻ ՕՐ

Յունուար 28-ին հայ ժողովուրդը կը նշէ Հայոց Բանակի օրը: Այս տարի անոր կազմաւորման 32-րդ ամեակն է: Բանակի տօնը առաջին հերթին առիթ կ'ընծայէ, որ յիշենք այն բոլոր ազատամարտիկները, որոնց նուիրումին եւ անձնագոհութեան շնորհիւ անկախացաւ մեր հայրենիքը եւ կայացաւ Հայոց Բանակը: Այս տօնին առթիւ պէտք է նաեւ նշենք մեր երիտասարդ հայ զինուորներուն կտրիճութիւնը, որոնք ամէն օր սահմանին կանգնած կը վտանգեն իրենց մատուցած կեանքերը՝ խաղաղ երկինք եւ ապահով հայրենիք մը պարգեւելու համար բոլորիս: Վերջապէս, իւրաքանչիւր Յունուար 28-ին պէտք է բոլորս յիշենք վերջին 32 տարիներուն ընթացքին տեղի ունեցած բոլոր պատերազմներուն ժամանակ զոհուած քաջարի հայորդիները եւ վառ պահենք անոնց յիշատակը, որոնց կամքերը անկտորում էին, իսկ սխրանքները՝ անթիւ:

Այս տօնը պէտք է միշտ նշենք ու հպարտանանք մեր բանակով, որովհետեւ ինչպէս երկրի մը դրօշակը սրբութիւն կը սեպուի եւ կը խորհրդանշէ անոր անկախութիւնը, իսկ զինանշանը՝ անոր տարիներու պատմական-ազգային ժառանգութիւնը, այդպէս ալ երկրի մը բանակը կը խորհրդանշէ անոր պատին ու զօրութիւնը: Եթէ պետութիւն մը ունենայ ուժեղ բանակ, ապա ան կը դառնայ անպարտելի, իսկ երկիրը՝ աննուաճելի: Ուստի, ամէն օր պէտք է երախտապարտ զգանք, որ մեր թիկունքին ունինք արհասիրտ զինուորներ:


Տօնը շնորհաւոր, Հայկական բանակ



Ո՛Վ ԵՄ ԵՍ

Առաջին տառս կը գտնուի «սար»ին մէջ, բայց ոչ՝ «սէր»ին:
 Երկրորդ տառս կը գտնուի «գարդ»ին մէջ, բայց ոչ՝ «բարդ»ին:
 Երրորդ տառս կը գտնուի «թարմ»ին մէջ, բայց ոչ՝ «մերթ»ին:
 Չորրորդ տառս կը գտնուի «տուն»ին մէջ, բայց ոչ՝ «քուն»ին:
 Հինգերորդ տառս կը գտնուի «քնար»ին մէջ, բայց ոչ՝ «ներքին»ին:
 Վեցերորդ տառս կը գտնուի «միրգ»ին մէջ, բայց ոչ՝ «կարմիր»ին:
 Եօթերորդ տառս կը գտնուի «կար»ին մէջ, բայց ոչ՝ «քանակ»ին:
 Ութերորդ տառս կը գտնուի «փոս»ին մէջ, բայց ոչ՝ «փաստ»ին:
 Իներորդ տառս կը գտնուի «նա»ին մէջ, բայց ոչ՝ «նամակ»ին:
 Տասերորդ տառս կը գտնուի «մագ»ին մէջ, բայց ոչ՝ «սագ»ին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ



(ԲԵԿՈՐ) ԱՇՈՏ ՂՈՒԼԵԱՆ

Արցախեան առաջին ազատագրական պայքարին ընթացքին զոհուած հերոս Աշոտ Ղուլեան ծնած է 1959 թուականի Հոկտեմբեր 6-ին, Պաքուի մէջ: Ան 16 տարեկանին ըտանտօք տեղափոխուած է Ստեփանակերտ, այնտեղ շարունակած է իր ուսումը եւ երկու տարուան զինուորական ծառայութենէն ետք նետուած՝ կեանքի ասպարէզ: Շատեր կը վկայեն, որ Աշոտ բազմարհեստ էր. ան միաժամանակ վարպետ էր՝ դերձակ, շինարար, ինքնաշարժի վարորդ եւ փականագործ: Սակայն անոր անունն անմահացաւ Արցախեան ազատագրական պայքարի օրերուն՝ իր ունեցած անզուգական ներդրումին ու անձնուիրութեան շնորհիւ:

Ղուլեան բնածին զինուորական էր, գաղափարապաշտ, խիզախ, վճռական եւ հնարամիտ: Ան դաժան մարտերու ընթացքին աւելի քան տասը անգամներ ծանր վիրաւորուած էր եւ հրաշքով վերապրած: Աշոտին մարմինը այնքան խոցուած էր փամփուշտներով եւ ռումբի բեկորներով, որ անոր տուած էին «Բեկոր» ծածկանունը:

Ան իր հրամանատարական տաղանդով փայլած է, յատկապէս 1992-ի Մայիսին՝ Շուշիի ազատագրման ժամանակ, երբ իր խումբով առաջինը մուտք գործած է քաղաք: Դժբախտաբար նոյն տարուան Օգոստոսին մղուող ազատագրական մարտերէն մէկը եղած է Աշոտին վերջինը: Այս անգամ իր ստացած փամփուշտը եղած է մահացու, եւ ան այդպիսով միացած է մեր նահատակ հերոսներու լուսեղէն փառանքին:

Հայրենիքին մատուցած իր ծառայութեան համար Բեկոր պարգեւատրուած է «Մարտական Խաչ» եւ «Ոսկէ Արծի» շքանշաններով ու արժանացած՝ «Արցախի Հերոս» կոչումին: Անոր անունը կը կրէ նաեւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան Լաւալի «Բեկոր Աշոտ» մասնաճիւղը, որուն անդամները օրն ի բուն կը գործեն արժանի դառնալու համար Աշոտ Ղուլեանի նման հերոսներու կտակած ժառանգութեան:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Գնամ խառնուեմ մեր գետերին
Ու գետերի հետ յորդանամ,
Ու գետերի հետ խենթանամ,
Ու գետերի հետ ընթանամ:

Գնամ խառնուեմ լուրթ ծովերին
Ու ծովերի մէջ զօրանամ,
Ու ծովերի մէջ խորանամ,
Ու ծովերի մէջ ծովանամ:

Անտառները գնամ մտնեմ,
Կաղնիներից ուժ ստանամ,
Ծփանքներով հարստանամ,
Կաղնու նման ըմբոստանամ:

Գնամ ելնեմ լեռները մեր
Ու լեռների հետ ծառանամ,
Ու լեռների պէս բարձրանամ,
Ու լեռների հետ կարծրանամ:

Գնամ, գնամ, վառուեմ, հալուեմ,
Լուրթ երկնքում ծիածանուեմ,
Արտերի հետ ծփամ նորէն,
Այգիներում պտղաւորուեմ...
Այսքան սէրը, կարօտն այսքան
Կրծքիս տակ ինչ տեղաւորեմ:

Վազգէն Ովեան

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԸ

Տիգրանակերտը պատմական հայկական քաղաք մըն է, որ կը գտնուի Արցախի Հանրապետութեան արեւելքը: Ան կառուցուած է Ք.Ա. առաջին դարուն՝ «Արքայից Արքայ» Տիգրան Մեծին կողմէ: Խորհրդային միութեան օրով Տիգրանակերտը յաճնուած է Ատրպէյճանին: Սակայն Արցախեան առաջին ազատագրական պայքարին ընթացքին հայկական զինուած ուժերը ազատագրած են զայն: Անոր ճշգրիտ վայրը յայտնաբերուած է 2005 թուականին, եւ 2006-ին սկսած են պաշտօնական պեղումներ: Հնագէտները գտած եւ ուսումնասիրած են քաղաքին միջնաբերդը,



պարիսպները, քաղաքին կեդրոնական մասը եւ պազիլիկ եկեղեցին, որոնց մեծամասնութիւնը կառուցուած եղած է կրաքարերով: 2008-ին ի յայտ եկած են այս պեղումներուն ամենակարեւոր արդիւնքները՝ հայերէն արձանագրութիւններ, որոնք կը փաստեն, թէ այս շրջանը հազարամեակներէ ի վեր եղած է հայկական հող: Վերջապէս 2010 թուականին Տիգրանակերտի տարածքէն ներս գտնուող ամրոցին մէջ բացուած է պեղումներու թանգարանը, որ այցելուներուն կը ներկայացնէ յետախուզութիւններուն ընթացքին յայտնաբերուած իրերու նմուշներ, ինչպէս՝ հին ապարանջաններու եւ քանդակագործութիւններու բեկորներ: Դժբախտաբար, ըստ 2020-ի քառասունչորսօրեայ պատերազմին վերջ տուող ամօթալի պայմանագրին, ան դարձեալ անցած է ատրպէյճանական լուծին տակ:



Գիտէ՛իր թէ


- Արցախը, իր հայկական անուանումով, ունի աւելի քան 2000 տարիներու պատմութիւն:
- Արցախի Ամարաս վանքը եղած է առաջին դպրոցը, ուր դասաւանդուած է հայերէն այբուբէնը 410 թուականին:
- Արցախի (Ղարաբաղեան) ձին ազնուացեղ նժոյգ է եւ շատ հին ժամանակներէն ի վեր կը համարուի արեւելեան լաւագոյն ձիատեսակներէն մէկը:

ԿԵԱՆՔ ՈՒ ԿՈՒԻ



Բեմադրիչ Միեր Մկրտիչեանի ստեղծագործած «Կեանք ու կոի» խորագրով զոյգ ժապաւէնները կը նկարագրեն մեր ժողովուրդի գոյամարտը, դառն ճակատագիրը եւ նուիրումը՝ հայրենի հողի պաշտպանութեան: Ֆիլմը մօտէն կը հետեւի 4 մտերիմ ընկերներու եւ անոնց 2 քոյրերուն կեանքերուն եւ առօրեային: Դէպքերը կը պատահին 1990-1992 թուականներուն, եւ անոնցմէ իրաքանչիւրը կը մարմնաւորէ տարբեր տեսակի հայ մը: Արմէնը մեծ եղբօր եւ հայ տղամարդու իսկական տիպարն է: Եղուարդը կը ներկայացնէ կամքէն անկախ հայրենիքէն արտագաղթող երիտասարդութիւնը: Լեւոնը կը ներկայացնէ բարեսիրտ, յաջողակ, սակայն ամենակարեւորը՝ իրապաշտ հայը, որ իր կարելիութիւնները ի սպաս կը դնէ հայրենիքին: Եւ վերջապէս Տիգրանը՝ ժապաւէնին ամէնէն ազնիւ ու համեստ հերոսը, բացառիկ մարմնաւորումն է հաւատարմութեան արժանիքին

առ ընկերներ, սէր, ընտանիք եւ հայրենիք: Արմէնին երեք ընկերներն ալ սիրահարուած են իր քրոջ՝ Աննային, եւ ըստ համաձայնութեան, իրաքանչիւր ունի 3 ամիս գրաւելու համար անոր սիրտը՝ առանց միւս ընկերներուն միջամտութեան: Իսկ եթէ անելի հեռուէն նայինք այս բոլորին, պիտի տեսնենք, թէ այս 25-ամեայ երիտասարդները ունին տարբեր ճակատագիրներ, կ'ուղղուին կեանքի տարբեր ճանապարհներով, սակայն բոլորին պատմութիւնը մէկ է՝ Արցախեան պատերազմը ու անոր ազդեցութիւնը իրաքանչիւրին հոգեկան ներաշխարհին վրայ: «Կեանք ու կոի»ը մենք ենք, մեր արցունքը, ժպիտը, ցաւն ու կարօտը, եւ քանի որ դարձեալ ունինք բաց վէրքեր, քանի որ մեր բոլորին սրտերը կ'արտասուին նոյն ցաւով, կ'առաջարկեմ ակնդրէք այս գեղեցիկ ու չափազանց ազդեցիկ ստեղծագործութիւնները եւ զգաք մեծ գոհունակութիւն:




ՍԱՄՈՒԷԼ ԹԱԴԵՒՈՍԵԱՆ (ՏԻԳՐԱՆ)




ԱՆԻ ԽԱԶԻԿԵԱՆ (ԱՆՆԱ)



ՍԱՄՈՒԷԼ ԹՕՓԱԼԵԱՆ (ԱՐՄԱՆ)



ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ (ԼԵՒՈՆ)



ԷԼԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ (ՍՈՖԻ)

ԱՂՈՒՈՐ ԲԱՌԵՐ

- Յանձնառութիւն – պարտքի զգացում
- Կտրիճութիւն – քաջասրտութիւն, անվեհերութիւն
- Սխրանք – քաջագործութիւն
- Բեկոր – կտոր, մաս, մնացորդ
- Երախտապարտ – ստացած բարիքը ճանչցող, շնորհակալ
- Անզուգական – իր զոյգը չունեցող, անմասն
- Փաղանգ – զօրագունդ, մարտական խումբ
- Բնածին – ի ծնէ ստացուած, բնատուր
- Խիզախ – յանդուգն, քաջարի
- Լուրթ – երկնագոյն, բաց կապոյտ
- Ըմբոստանալ – բողոք բարձրացնել, ապստամբիլ
- Պտղաւորուիլ – պտղաբեր դառնալ
- Գոյամարտ – կեանքի պայքար, գոյութեան համար պայքար
- Ի սպաս – ի շահ, ի նպաստ, օգուտին համար
- Մարմնաւորում – անորոշ մտքերու եւ պատկերներու մարմին ստանալը
- Պեղում – հողին տակ թաղուած աներակները մէջտեղ հանելու աշխատանք
- Պարիսպ – արտաքին երկար եւ ամուր պատ
- Միջնաբերդ – պարիսպներով պատուած քաղաքի կեդրոնական բերդ
- Կրաքար – քարի տեսակ (limestone), որ այրելով կիր կը դառնայ
- Պագիլիկ – ճարտարապետական որոշ ոճով շինուած քրիստոնէական տաճար (երկայն՝ քառանկիւն)

ՍՈՃԻՆ

Սոճիի կամ շոճիի ծառերը, որոնք կը գտնուին Ֆրանսայի կեդրոնական շրջանի եւ Լեոնալիբանանի մէջ, ամէնէն անելի թանկագիններն են ասեղնատերեւ ծառերուն մէջ: Անոնք կը տարբերին մնացեալ սոճիներէն իրենց բաց վարդագոյն կեղեւով, սուր եւ կարճ ասեղի նման տերեւներով եւ հաւկթածեւ բողբոջով:



Սոճին հաճելի հոտ մը ունի շնորհիւ իր պարունակած եթերաիւղին: Այս եթերաիւղը օգտակար է հազի, սինիւզիթի եւ հարբուխի պարագաներուն: Երբ հիւանդ ըլլանք, մեր մարմինը խուփ (mucus) կ'արտադրէ. եթերաիւղը կը կակուղցնէ եւ կը ջրոտէ խուփը, որպէսզի ան դիւրութեամբ դուրս գայ մեր մարմնէն ու հանգստացնէ բոլորքումը:




Օգնէ՛ արցախցի փոքրիկներուն, որ գտնեն իրենց ճամբան դէպի Մամիկն ու Պապիկը:

ՇՈՒՇԻ

Կրթական եւ մշակութային քաղաք

1820-ական թուականներուն Շուշին եղած է հայերու եւ ամբողջ կովկասեան շրջանի մշակութային խոշոր կեդրոններէն մէկը: Շուշիի կրթական եւ մշակութային կեանքի այս վերելքը տեսած է 100 տարի. ընդհատուած է 1920 թուականին, երբ հայեր ենթարկուած են ֆիզիքական եւ մշակութային ցեղասպանութեան:



Կ'երեւակայէ՞ք, 1859 թուականէն սկսեալ, Շուշիի մէջ գոյութիւն ունեցած են գրադարան-ընթերցարաններ, ուր կարելի էր գտնել հայերէն եւ ռուսերէն լեզուներով գիրքեր եւ թերթեր: Նոյն թուականներուն Շուշիի մէջ ունեցած ենք գրատուներ, դպրոցներ եւ տպարաններ:


Շուշիի մշակութային կեանքին մէջ մեծ դեր ունեցած է թատրոնը: Սկիզբը թատրոնի դերակատարներ եղած են տղամարդիկ, բայց շուտով անոնց միացած են նաեւ կիներ: 1891 թուականին թատերասէր Դ. Խանդամիրեանի միջոցներով Շուշիի մէջ շինուած է թատրոնի համար 350 տեղանոց յատուկ շէնք: Թիֆլիսէն եւ այլ տեղերէ դերասաններ եկած են Շուշի ներկայացումներ կատարելու: Այդ դերասաններու շարքին եղած է օրինակ՝ Պետրոս Ադամեան: Դժբախտաբար 1905 թուականին, հայ-թրքական կռիւներու ժամանակ թաթար աւազակախմբեր կրակի տուած ու այրած են թատրոնի շէնքը, բայց հայեր շարունակած են միշտ աշխոյժ պահել իրենց մշակութային կեանքը:



Հարցումներուն պատասխաններուն առաջին տառերը շարելով, գտի՛ր պահուած բառը:

Զարթօնք շրջանի հռչակաւոր գրողներէն՝
Յակոբ Մելիք Յակոբեանի գրչանունը:

Անձնական ճակատագիրը որոշելու,
մինչեւ իսկ անկախ պետութիւն
կազմելու իրաւունք:



Մարմնիս վրայ ռումբի կտորներէ
ստացած սպիներուս պատճառով,
կը կրեմ «Բեկոր» ծածկանունը:

«_____ լաօ,
մռնիմ քըզի:»

Ծնած եմ Գալիֆորնիա
եւ մասնակցած եմ
Արցախեան առաջին
պատերազմին:
Մահացած եմ
1993-ին:

«Ցանկամ տեսնել
զիմ _____,
Աշխարհ, որ ինձ
ետուր արև:»

Այն աւերակ քաղաքը, զոր կառուցած է «Արքայից
Արքան», եւ 2020-ի Արցախեան պատերազմին
յանձնուած է Ազրաբէյճանին:

Ո՛վ եմ ես խաղին պատասխանն է «Ազատագրում»



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Արիանէ Թասլաքեան
Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի